ՆՈՐ ԳՐՔԵՐ

(ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն)

«Հայ ժողովրդի պատմություն», հատոր VIII, 1970 թ., տպաքանակը 12000, 380 էջ:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» VIII հատորն ընդգրկում է 1941—1965 թվականները: Սովետական Միության ժողովուրդների պատմության այս շրջանը հատկանշվում է Հայրենական մեծ պատերազմով, ետպատերազմյան ժամանակաշրջանի խաղաղ շինարարական աշխատանքի հսկայական հաջողություններով և կոմունիզմի ծավալուն շինարարությամբ:

Բազմահատորյակի ներկա հատորում ցույց է տրված երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆաշիզմի դեմ մղված պայքարում հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը և պատերազմի հաղթական ավարտից հետո սովետական ժողովրդի, այդ թվում հայ ժողովրդի, ծավալուն խաղաղ շինարարական աշխատանքը: Լուսաբանված է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության պայքարը ժողովրդական տնտեսության պլանների կատարման ու գերակատարման համար: Հատուկ ուշադրություն է դարձված եղբայրական հանրապետությունների աշխատավորների հետ Հայաստանի աշխատավորության սոցիալիստական մրցության հարցերի լուսաբանմանը: Ցույց են տրված Սովետական Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերն ու համագործակցությունը սովետական մյուս հանրապետությունների հետ:

Սովետական Հայաստանի պատմությունը շարադրված է ՍՍՀՄ պատմության հետ սերտորեն առնչված, սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության լույսի տակ: Զգալի տեղ է հատկացված սփյուռքահայության պատմությանը:

Գիրքն ունի օգտագործված գրականության մատենագրություն, անվանացանկ, տեղանունների ցանկ և 6 քարտեզ:

Հատորի պատասխանատու խմբագիրն է Ա. Մ. Հակոբյանը:

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ — «Երկերի ժողովածու», հատոր 6, 1970 թ., տպաքանակը 12000, 255 էջ:

Պատկանյանի Երկերի այս հատորն ամփոփում է գրողի նամակները (1849—1877), որոնց մեծ մասը տպագրվում է առաջին անգամ: Նամակները հարուստ նյութ են բովանդակում ականավոր գրողի կենսագրության, գրական գործունեության, երկերի ստեղծագործական պատմության, հասարակական-քաղաքական հայացքների, գեղագիտական ըմբռնումների վերաբերյալ:

Ժողովածուում ընդգրկված են նաև պաշտոնական գրությունները:

Հատորն ունի ծանոթագրություններ, անձնանունների բառարան և անվանացանկ: Խմբագիրն է Պ. Հակոբյանը:

ՎԱՀԵ ԵՐԿԱՆՅԱՆ — «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905)», 1970 թ., տպաքանակը 2000, 308 էջ:

Մենագրության մեջ պատմաբանական վերլուծության են ենթարկված արևե-

լահայ դպրոցի պատմության այն կարևորագույն շրջանի հարցերը, երբ ժողովրդի կրթության ու լուսավորության խնդիրն առանձնակի սրություն էր ստացել, երբ հասարակության լավագույն ուժերն իրենց ջանքերն ուղղել էին այդ խնդրի կատարմանը: Հարցը քննվում է ամբողջ Անդրկովկասի մասշտաբով, որտեղ հատկապես 1870-ական թվականներից սկսել էր լայնորեն մուտք գործել նոր ժամանակների ոգուն համապատասխանող ազգային դպրոցը և երկրամասի հայաշատ կենտրոններում (Թիֆլիս, Երևան, Ալեքսանդրապոլ, Բաքու, Շուշի, Դանձակ և այլն) էլ հենց այն թափ էր ստացել կրթության նոր սկզբունքների, դպրոցի դեմոկրատացման ու աշխարհականացման համար մղվող պայքարը, որը միաժամանակ ուղղված էր ցարիզմի համաձուլարար քաղաքականության դեմ: Աշխատության մեջ շեշտվում է նոր դպրոցի դերն ու նշանակությունը ազգային համախմբման հարցում ապրոցեսում, վեր է հանվում մայրենի լեզվի ու ազգային դաստիարակության առանձնակի կարևորությունը քննվող ժամանակաշրջանում: Ուսումնասիրությունն ավարտվում է 1905 թ. իրադարձություններով, երբ ռուսական հեղափոխության բարձրացող ալիքը և հայ ժողովրդի համառ դիմադրությունն ստիպեցին ցարիզմին վերականգնելու XIX դ. վերջերին վակված հայկական դպրոցների գոյության իրավունքը:

Գրքին կցված են օգտագործված աղբյուրների և գրականության, ինչպես նաև անձնանունների ու տեղանունների ցանկեր: Խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը:

Վ. Վ. ՍՏԱՍՈՎ, Ա. Ն. ՎԵՍԵԼՈՎՍԿԻ, Ա. Վ. ԼՈՒՆԱՉԱՐՍԿԻ, Ա. Մ. ԳՈՐԿԻ — «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին», 1970 թ., տպաքանակը 3000, 299 էջ:

Ժողովածուն լույս է տեսել ռուսերեն լեզվով: Այն «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» մատենաշարի երկրորդ գիրքն է, ուր ամփոփված են Ստասովի, Վեսելովսկու, Լունաչարսկու և Գորկու հոդվածները, նամակները և ասույթները հայ մշակույթի, թատրոնի, գեղանկարչության, երաժշտության, ինչպես նաև՝ հայ մշակույթի առանձին գործիչների մասին: Ռուս ժողովրդի այս հանճարեղ զավակները տարբեր ժամանակներ և տարբեր առիթներով, Հայաստանի համար դժվարին տարիներին, սիրով ու ջերմությամբ են արտահայտվել հայ ժողովրդի և նրա բազմադարյան մշակույթի մասին: Ժողովածուի կազմող՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ի. Ռ. Սաֆրազբեկյանը մեծ խնամքով ու հոգատարությամբ հավաքել է այդ ամենը և դարձրել առանձին գիրք: Ժողովածուի խմբագիրն է Գուրգեն Հովնանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սովետական Վրաստանի 50-ամյակի առթիվ

Ա. Ի. Կոշլավաշվիլի—Սովետական Վրաստանի ինդուստրիալ զարգացումը . . 3

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Գ. Ա. Գալոյան—Կոմունիստական կուսակցության կազմավորումը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում 19
Վ. Ա. Գրիգորյան—Էջեր Հայաստանի պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության զարգացման պատմությունից 35
Գ. Թ. Սիմոնյան—Լուսավան արդյունաբերական կենտրոնի ստեղծումը . . . 43
Ա. Ս. Ջանինյան—ՀԿԿ պայքարը գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման համար (1959—1965 թթ.) 53
Ռ. Մ. Թոխմախյան—Ժամանակակից հայերենի բառային շեշտը 60

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Գ. Ա. Հովհաննիսյան—Լենինյան գաղափարների անխոնջ մարտիկը . . . 65
Ս. Ս. Ջիլինգարյան—Վաղ հայկական հուշարձաններ Ջուլֆանի դամբարանադաշտում 69
Ն. Բ. Ներսիսյան—Վ. Գ. Կորոլենկոն հայերեն 74
Մ. Ս. Հակոբյան—«Արգելակման» դոկտրինա 81
Ս. Գ. Ալլահվերդյան—Ժամանակակից արդյունաբերական սոցիոլոգիայի մի քանի պրոբլեմները 93
Հ. Ա. Ասմարյան—Երկրաչափական և բուսական զարդաքանդակների զարգացման պատմությունից (IV—VII դդ.) 102
Ի. Կ. Ենիկոլոփով—Գուրգեն խանը և Սայաթ-Նովան 108

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ս. Ա. Ասլանյան—Փոխառությունները տերմինակազմության աղբյուր . . . 113
Պ. Մ. Նազարյան—Օտարարանությունների բնույթը հայերենում 120

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Միհրդատ Թիրյաքյան—Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ . 121

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Երիտասարդ գիտաշխատողների առաջին նստաշրջան 126
Նոր գրքեր 126